Perspectives The Armenia- Azerbaijan war: What is peace and why compromise ?

Հեռանկարներ հայ – ադրբեջանական պատերազմում. ի՞նչ է խաղաղությունը և ինչու՞ փոխզիջում.

Լեռնային Ղարաբաղի վերսկսված հակամարտության վերաբերյալ վերլուծությունների շղթայում քիչ է խոսվում այն մասին, թե ինչպես հայերն ու ադրբեջանցիները կարող են օգտագործել իրենց ներուժն ու պատկերացումները խաղաղ կարգավորման համար:

Գոյություն ունի մի ընկալում, որ պատերազմը ինքնությունների, սրբազան արժեքների և իրարամերժ պատմությունների մասին է, բայց քիչ է խոսվում այն մասին , թե որքան մեծ դեր է խաղում հասարակության վերաբերմունքն ու տրամադրությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացում: Եւ իրոք, Երևանում և Բաքվում որոշումները հաճախ բացատրվում են կոշտ անվտանգության և աշխարհաքաղաքական տերմիններով: Դրա օրինակը, որը շատերի համար անակնկալ էր, զանգվածային դժգոհությունն ու ինքնաբուխ զորահավաքն էր Բաքվում հուլիսին Հայաստանի հետ բախումներից հետո, երբ հազարավոր մարդիկ դուրս եկան փողոց՝ խնդրելով լուծում տալ հակամարտությանը:

2018-ի վերջին "International Alert" խաղաղարար հասարակական կազմակերպությունը ուսումնասիրություն անցկացրեց Հայաստանում, Ադրբեջանում և Ղարաբաղում հասարակական դիրքորոշման վերաբերյալ: Այս ուսումնասիրությունը, շատ առումներով, աչք բացող և խորապես մտահոգիչ էր, քանի որ, չնայած խաղաղություն ներկայացնելու իր նպատակին, այն եկավ այն համոզմունքին, որ որպես այս հակամարտության լուծման միակ միջոց ընդունվում է բռնությունը և մարդկային զոհաբերությունը: Շատերը կարծում էին, որ պատերազմն անխուսափելի է:

Օրինակ, երբ հարցվողները նախապատվություն էին տալիս «խաղաղությանը», սահմանումները արմատապես տարբերվում էին: Բռնության բացակայություն, հրադադար և կայունություն հայերի համար. պատմական արդարության վերականգնում՝ ադրբեջանցիների համար, հողերը վերադարձնելու միջոցով: «Խաղաղություն» բառի այս մեկնաբանությունները անհնար է դարձնում կողմերի միջև միասին խաղաղության գալը:

Քաղաքական առաջնորդները արտաքին լսարանի համար օգտվում են «խաղաղության» երկիմաստ, հռետորական օգտագործումից :

Նմանապես, փոխզիջումը՝ հակասական , նույնիսկ <<տաբու>> հասկացությունը, որը բուռն արձագանքներ է առաջացնում հակամարտության բոլոր կողմերից, հասկացվում է տարբեր ձևերով: Յուրաքանչյուր կողմ փոխզիջում է ընդունում, բայց հակառակ կողմից քչերն են մտածում այն մասին, թե ինչ զիջումներ են պատրաստ անել հասարակությունն ու անհայտները: Որպես էական փոխադարձություն որի դեպքում երկու կողմերն էլ հրաժարվում են իրենց ուզածից ՝ իրենցից ավելի շատ բան ստանալու համար ընկալվում է որպես կորուստ : Իհարկե, որոշ բաներ հնարավոր չէ փոխզիջման ենթարկել , քանի որ դրանք շոշոափում են անհատի կամ խմբի ինքնության կամ էլ գոյատևման հիմքը: Այնուամենայնիվ, անիրատեսական սպասումները լեգիտիմացնում են հակառակորդի վախերը, հույսերն ու նկրտումները ՝ ամբողջությամբ հեռացնելով մյուս կողմին հավասարումից:

Վերջին օրերին, երբ մենք բոլորս հավատարիմ ենք մնում տարածաշրջանի ցանկացած հույսի նշանին, ուշագրավ է տեսնել, թե ինչպես են հայերն ու ադրբեջանցիները հուսահատորեն խաղաղության կոչ անում : Բայց անհերքելիորեն խորհրդանշական և այդպիսի մարտահրավերների արժեքը ազդարարող թիկունքում ընկած է խաղաղության մարտահրավերը, քանի որ «խաղաղությունը» ոչ հրադադար է, ոչ էլ պատերազմի բացակայություն:

Խաղաղությունն այն է, երբ մարդիկ ղեկավարում են անհամաձայնությունները առանց բռնության և ներգրավվում են ներառական սոցիալական փոփոխությունների գործընթացներում, որոնք բարելավում են յուրաքանչյուրի կյանքի որակը: Սա է փոխկախված, «դրական» խաղաղության գաղափարը, որը խթանող ջանքեր է մղում այս հակամարտությունը վերափոխելու համար: Որքան էլ դրանք վատը լինեն այդ հասկացություններն ու սահմանումները կարևոր են իրենց կրած իմաստներով: Այս իմաստների բացումը հիմքն է այն բանի, թե ինչ են անում հասարակությունները խաղաղության հասնելու համար ՝ կախված նրանից, թե ինչպես են նրանք ՝ սովորական քաղաքացիները, այլ ոչ թե քաղաքական և մտավոր վերնախավերը, պատկերացնում և գաղափարացնում :

Հասարակական կարծիքի մոնիտորինգը և դրա վրա ազդելը համարվում են խաղաղ գործընթացների հիմնական մասը՝ այլ ձևաչափում, ինչպես ցույց տվեց Հյուսիսային Իռլանդիայի փորձը: Ղարաբաղյան հակամարտությունը սկսելու ուղիներից մեկը ՝լսել, հասկանալ և փոխազդել այն ամենի հետ, ինչ զգում և մտածում են հասարակ մարդիկ:

Թարգմանությունը՝ Գրիգորյան Թագուհի

Հովհաննիսբան Ալլա

Բաղոյան Սյուզաննա

Ղեկավար՝ Զաքարյան Սուսանն

Սուվարյան Արմինե